British Embassy Yerevan

Շվեդիա Sverige

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

UNDP

UKaid from the British people

oxYGen EMPOWERING WOMEN AND YOUTH

Ազգային ժողով-քաղաքացիական հասարակություն համագործակցության հարթակի ընդլայնված հանդիպման

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն թվականի մայիսի 18-ին տեղի ունեցավ Ազգային Ժողով-քաղաքացիական հասարակություն (ԱԺ-ՔՀԿ) համագործակցության հարթակի ընդլայնված հանդիպումը:

Հանդիպման նպատակները.

- ներկայացնել ԱԺ-ՔՀԿ հարթակի 2019-2021 թթ. գործունեության հիմնական ձեռքբերումներն ու մարտահրավերները.

- քննարկել ՀՀ-ում կանանց զբաղվածության խթանմանը և աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված առաջարկությունները՝ ներկայացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից:

Հանդիպումը կազմակերպվել էր «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի հետ համագործակցությամբ և Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության ֆինանսական օժանդակությամբ:

Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ Ազգային ժողովի Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, ՄԱԶԾ Հայաստանի «Նոր Հայաստան, ժամանակակից խորհրդարան» ծրագրի գլխավոր տեխնիկական մասնագետ Բիլիանա Լեդենիկան, ՕքսԵՁեն հիմնադրամի ղեկավար Մարգարիտա Հակոբյանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ և ոլորտի փորձագետներ:

Հանդիպման բացման խոսքում կարևորվեց.

ՕքսԵՁեն հիմնադրամի ղեկավար **Մարգարիտա Հակոբյանը,** ներկայացնելով ԱԺ-ՔՀԿ հարթակի նախապատմությունը, կարևորեց հարթակի գործունեության շարունակականության ապահովումը՝ հանրությանը հուզող հիմնախնդիրները համատեղ քննարկելու և դրանց շուրջ օրենսդրական լուծումներ առաջարկելու առումով:

ՄԱԶԾ Հայաստանի ներկայացուցիչ **Բիլիանա Լեդենիկան**, հատուկ շնորհակալություն հայտնելով ՕքսԵՁեն հիմնադրամին հարթակի աշխատանքները համակարգելու և սույն հանդիպումը կազմակերպելու համար, նշեց, որ ԱԺ-ՔՀԿ համագործակցության հարթակը առաջընթաց է Հայաստանի համար՝ հաշվի առնելով Միջխորհրդարանական միությունում քաղաքացիական հասարակության ներգրավման տեսանելի միտումը: Հարթակի գործունեության արդյունավետության տեսակետից բանախոսը կարևորեց քննարկվող հիմնախնդիրների շուրջ հաստատված կապերի պահպանումը իշխանության այլ ճյուղերի, հատկապես գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ: Որպես հարթակի գործունեության արդյունավետության ցուցանիշ կարևորվեց հարթակի աշխատանքների արդյունքում ընդունված և կատարելագործված օրենսդրական նախաձեռնությունների վիճակագրությունը:

ԱԺ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյանը** կարևորեց հարթակի վերագործարկումը հատկապես այս շրջանում, երբ նախատեսվում են Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ: Շեշտադրվեց այն հանգամանքը, որ հարթակի հանդիպման օրակարգը ներառում է կանանց զբաղվածության խթանման ու աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցեր:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ **Ռուբեն Սարգսյանը** հավաստացիացրեց, որ գենդերային հավասարության սկզբունքը ՀՀ կառավարության առաջնահերթությունների ցանկում է: Նրա ներկայացմամբ, Աշխատանքային օրենսգրքի նախագծում, որը շրջանառության մեջ կդրվի այս ամսվա վերջին և կներկայացվի Ազգային Ժողով, արդեն իսկ հաշվի են առնվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներկայացված մի շարք առաջարկներ, և դրանք կարտացոլվեն նախագծի վերջնական տարբերակում:

Նախարարի տեղակալը կարևորեց ԱԺ-ՔՀԿ հարթակի և նմանատիպ ֆորմատների նշանակությունը պետական քաղաքականություն մշակելու տեսակետից, տեղեկացրեց, որ նախարարությունը ներկայումս քայլեր է իրականացնում կանանց զբաղվածության խնդիրների լուծման ուղղությամբ: Ռուբեն Սարգսյանը նշեց նաև, որ շուտով կներդրվի արտադատական աշխատանքային վեճերի կարգավորման նոր ինստիտուտը: Նախատեսվում է ունենալ միջազգային փորձի վրա հիմնված մոդել, որը կքննարկվի բոլոր շահագրգիռ մարմինների հետ:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին՝

- **ԱԺ-ՔՀԿ համագործակցության հարթակի 2019-2021 թթ. գործունեության ամփոփիչ զեկույցը** (բանախոս՝ գենդերային փորձագետ Թամարա Հովնաթանյան).
- **«Կին պատգամավորները 5-րդ, 6-րդ, 7-րդ գումարումների ԱԺ-ում»** հետազոտությունը (բանախոս՝ «Արգումենտ» ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ Արման Մելքոնյան)



Քննարկված հիմնախնդիրները

Հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք հիմնախնդիրներ, որոնք անմիջականորեն առնչվում էին օրակարգային հարցերին, այն է՝ կանանց զբաղվածության խթանմանը, նրանց աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանությանը:

ՔՀԿ ներկայացուցիչները բարձրաձայնեցին հետևյալ խնդիրները.

- աշխատավայրում սեռական ոտնձգությունների հիմնախնդրի օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն.

- ընտանեկան բռնության ենթարկված անձանց դեպքում պետական տուրքի գանձման կարգի հստակեցման խնդիրը՝ դատական մատչելիության ապահովման նպատակով.
- հղի կանանց և կերակրող մայրերի աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմները և գործատուի հետ նրանց իրավական փոխհարաբերություններում օրենքով սահմանված երաշխիքների պահպանման հարցերը.
- աշխատանքային միջավայրում LGBT համայնքի ներկայացուցիչների հանդեպ խտրականության դրսևորումները և նրանց աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների խնդիրը.
- Արհմիությունների՝ դատարան դիմելու իրավունքի ամրագրում, նրանց հաշվետվողականության և թափանցիկության խնդիրները:

Առաջարկություններ

Վերը նշված հարցադրումների շուրջ ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները.

1. **Սերտ համագործակցել ոչ միայն ԱԺ մշտական հանձնաժողովների, այլ նաև ԱԺ փորձագիտական կենտրոնի հետ**՝ դրանով իսկ ապահովելով օրենքների նախագծերի առավել հետևողական դիտարկումը գենդերային զգայունության տեսանկյունից:
2. **Հետևողականություն ցուցաբերել, որ Աշխատանքային օրենսգրքի նոր նախագծում ներառվեն աշխատավայրում սեռական ոտնձգությունների կարգավորմանը վերաբերող՝ ՔՀԿ-ների ներկայացրած առաջարկությունները**: Ընդ որում, կարևոր է, որ այդ առաջարկներն ընդունվեն ՔՀԿ-ների կողմից

ներկայացված ձևակերխպումներով և մեխանիզմներով, որոնք համապատասխանում են միջազգային փաստաթղթերի շրջանակում պետության ստանձնած պարտավորություններին:

3. **Իրազեկման աշխատանքներ կազմակերպել պետական կառույցների հետ համագործակցությամբ՝** աշխատավայրում գործատուների կողմից խտրականության դեպքերի, դրանց բարձրաձայնման մեխանիզմների և ապացուցողական բազայի մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, ընդ որում՝ իրազեկման գործընթացների շահառուների թվում ներառել նաև գործատուներին: Նույն նպատակով համագործակցել ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հետ՝ վերջինիս՝ օրենքով սահմանված գործառույթների շրջանակում, ներառյալ ՀՀ օրենքիների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը նշված ոլորտներում:
4. **Քայլեր ձեռնարկել աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ սեռով տարբերակված վիճակագրություն վարելու ուղղությամբ՝** օգտագործելով այդ հարցերով պատասխանատու կառույցների ներուժը:
5. **Ընդլայնել ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ դատարաններում պետական տուրքի վճարից ազատման հիմքերը**, որոնք, ըստ գործող «Պետական տուրքի» մասին օրենքի, ներառում են միայն ալիմենտի գանձման դեպքերը, մինչդեռ երեխայի մշտական բնակության, տեսակցության խնդիրների համար դատական վեճերում ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար արտոնություններ նախատեսված չեն: Սահմանել նմանատիպ արտոնություններ և ամրագրել փոփոխությունները «Պետական տուրքի» մասին օրենքում՝ հիմք ընդունելով նաև միջազգային պրակտիկան:
6. **Ներգրավել Աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների շուրջ հաջորդ քննարկմանը դատական իշխանության ներկայացուցիչներին**, մասնավորապես՝ Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչությունից՝ աշխատանքային իրավունքների խախտման դեպքերի մասին դատական պրակտիկան ներկայացնելու նպատակով:
7. **Քայլեր ձեռնարկել սոցիալական, տնտեսական աջակցության ծրագրերին առնչվող թվայնացված բազաների կատարելագործման ուղղությամբ**, դրանք բոլոր գերատեսչությունների համար հասանելի, իսկ սոցիալական աջակցության ծրագրերի շահառուներին հասցեագրված գործողություններն ավելի հստակ, թիրախային և ճիշտ ուղղորդված դարձնելու նպատակով:
8. **Իրականացնել պետական աջակցության ծրագրերի արդյունավետության պարտադիր գնահատում և մշտադիտարկում՝** նախատեսելով այդ նպատակով բոլոր միջոցառումների համար հստակ չափորոշիչներ:

9. **Պետական կառույցների հետ համատեղ գործողություններ ձեռնարկել** աշխատանքային իրավունքների պաշտպանության, աշխատանքային պայմանագրերի մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ:
10. **Աջակցել LGBT համայնքի շահերի պաշտպանությանը՝** համայնքի ներկայացուցիչների հանդեպ աշխատանքային միջավայրում խտրականության դրսևորման դեպքերում փաստարկների ապացուցման բեռը դնելով գործատուի վրա:
11. **Ուշադրության կենտրոնում պահել** հղի կանանց՝ գործատուի կողմից աշխատանքից ազատելու դեպքերը՝ օրենսդրական լրացուցիչ կարգավորումներ նախատեսելով օրենքով ամրագրված մայրության պաշտպանության երաշխիքների իրագործումն ապահովելու համար:
12. **Ամրագրել արհմիությունների՝ դատարան դիմելու իրավունքը**, նպաստել սոցիալական գործընկերության կայացմանը՝ ձևավորելով գործատուների հետ փոխհարաբերությունների շրջանակներում հստակ մեխանիզմներ՝ գործատուի կողմից աշխատատողի աշխատանքային իրավունքների պահպանումն ապահովելու նպատակով:
13. **Ներառել կանանց աշխատուժին, կանանց չվարձատրվող աշխատանքին վերաբերող հարցերի լուծումները** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվող Աշխատանքի և սոցիալական պաշտպանության նոր ռազմավարության մեջ:

***

Ամփոփելով հանդիպումը՝ ՕքսԵՁեն հիմնադրամի ղեկավար Մարգարիտա Հակոբյանը շնորհակալություն հայտնեց հարթակի մասնակիցներին մասնակցության և արդյունավետ քննարկման համար: Հարթակի հաջորդ հանդիպումը նախատեսվում է մեկ ամսից:

***

Ազգային ժողով-քաղաքացիական հասարակություն համագործակցության հարթակի նպատակն է ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունն օրենսդրական նախաձեռնություններում՝ ուղղված քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում կանանց իրավազորմանը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանմանը:

Հարթակի գործունեության ընթացակարգերը կամ հարթակի հանդիպումների ժամանակ արված եզրակացությունները կարող են չարտահայտել ՄԱՁԾ-ի կամ Ծրագրի մյուս գործընկերների տեսակետները: